ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների ամփոփում /2017-18 ուստարի/

Հաշվետվություն

30.06.2018թ.

2018թ-ի մայիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ամփոփիչ ատեստավորման քննությունների ավարտից հետո անց է կացվել հարցում մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման բաժինների շրջանավարտների շրջանում: Համաձայն մասնաճյուղի զարգացման 2016-20թթ. ռազմավարական ծրագրի 1.3.6. գործողության շրջանավարտների բավարարվածության հարցումն **առցանց** իրականացվել է ԵՊՀ-ի համապատասխան ծառայության էլեկտրոնային համակարգի միջոցով: Հարցման ***նպատակն է*** ուսումնասիրել ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների բավարարվածությունը.

1. կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից,
2. ուսումնական գործընթացի կազմակերպումից,
3. ուսումնառության ռեսուրսներից,
4. օժանդակ ծառայություններից,
5. համալսարանական միջավայրից,

բացահայտել նրանց կարծիքը կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ, պարզել նրանց ընդհանուր գնահատականը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Այդ հարցման ***խնդիրներ են՝***

1. գնահատել շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ստացած տեսական գիտելիքների մակարդակից, ձեռք բերած գործնական հմտություններից և կարողություններից:
2. գնահատել նրանց բավարարվածությունը պրակտիկաներից ձեռք բերած մասնագիտական գիտելիքներից, գործնական հմտություններից:
3. գնահատել բավարարվածությունը բուհում գործող գիտելիքների գնահատման համակարգի և ամփոփիչ ատեստավորման (ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության) օբյեկտիվությունից:
4. գնահատել բավարարվածությունը ուսումնական ռեսուրսների՝ լսարանների, համակարգչային սրահների, ուսումնական լաբորատորիաների, գրադարանի և ընթերցասրահի առկայությունից, մատչելիությունից, հարմարավետությունից և հագեցվածությունից, համացանցի արագությունից:
5. գնահատել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղի, ֆակուլտետների ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողական կառույցներից:
6. պարզել շրջանավարտների տեղեկացվածությունը օժանդակ ծառայությունների՝ Կարիերային նպաստող, խորհրդատվական, իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու մարմնի, վարչական, բուժկետի և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունից, գնահատել այդ ծառայություններից օգտվելու և բավարարված լինելու աստիճանը,
7. պարզել շրջանավարտների դիմումների և բողոքների, կրթական կարիքների վեր հանման և բավարարման ընթացակարգերի և մեխանիզմների աշխատանքի արդյունավետությունը,
8. պարզել կոռուպցիոն երևույթների առկայության փաստեր:

Իսկ ամենակարևորը, պարզել, թե շրջանավարտների որ մասը խորհուրդ կտա իր բարեկամներին և հարազատներին ընդունվել ԵՊՀ ԻՄ, ինչն ըստ էության կպարզի տարածաշրջանում մեր բուհի հեղինակությունը և պահանջվածությունը:

ՄԿՈԱ բաժինն Ուսումնամեթոդական վարչությունից վերցրել է հարցման արդյունքները, համակարգել և վերլուծել: Դրանք գնահատականներ են արտահայտված ազատ անկախ Հայաստանում, հուսով ենք, որ դրանք ավելի օբյեկտիվ են, անկողմնակալ և ազատ արտահայտված, ու չմոռանանք՝ ***առցանց***, ու որոնք ավելի կընդգծեն մասնաճյուղի գործունեությունը՝ նախորդ տարիների համեմատականության մեջ: Այդ արդյունքներն իրապես արտահայտում են շրջանավարտների բավարարվածության աստիճանը, բացահայտում են առկա խնդիրները և մատնանշում են այն դրականն ու օգտակարը, որ մատուցում է մասնաճյուղն իր ուսանողներին:

Ընթացիկ ուստարում առցանց տարբերակով հարցմանը մասնակցել են **270 շրջանավարտ**.

Ուս. ձևը	Ընդամենը	Կ/Ա	Դիզ.	ԻԿՄ	ՔԿԳ	ԷՔ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	Ֆրլ	Անգլ	Սերվ	Տնտ
առկա	138	8	10	11	5		6	10	19	14	17	10	28
հեռակա	132			5		19	15	26	12		7	12	36
Ընդամենը՝	270	8	10	16	5	19	21	36	31	14	24	22	64
		18		40			126					86	

Ապա ՄԿՈԱ բաժնում կատարվել է.

- այդ տվյալների մշակում և վերլուծություն ըստ ֆակուլտետների,
- 2010-11, 2012-13, 2014-15, 2016-17 ուստարիների շրջանավարտների հարցման արդյունքների հետ համեմատական վերլուծություն:

Մշակված տվյալները կներկայացնենք աղյուսակների և դիագրամների միջոցով:

Հարցման արդյունքները ներկայացնենք հարցաթերթի բաժիններին համապատասխան, խմբավորված ըստ իրենց ուղղվածության:

1. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

Այս բաժինը վերլուծելու համար հարցերը խմբավորվել են ըստ ուղղավուծությունների.

ա) Վերլուծվել է շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ձեռք բերած **տեսական գիտելիքների, գործնական հմտությունների և մասնագիտական կարողությունների** ձևավորման մակարդակից:

Ըստ ֆակուլտետների այն ունի հետևյալ պատկերը.



Իսկ ըստ ուսուցման ձևի այն ունի հետևյալ պատկերը.



Միջին գնահատականները վկայում են, որ մեր շրջանավարտները բավարարված են իրենց ձեռք բերած տեսական գիտելիքներից (**4,61; 4,62**) և մասնագիտական կարողություններից (**4,49; 4,54**), այնքան էլ գոհ չեն ստացած գործնական հմտություններից: Ուշադրության են արժանի կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտների գնահատականները, նրանք բավարարված չեն նաև ստացած գիտելիքների մակարդակից (**4,28**): Այս հարցում ֆակուլտետը հավանաբար պետք է վերանայի դասընթացների բովանդակությունը, տրամադրվող գրականությունը և այլն: Իսկ բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտներն առավել ընդգծված բավարարված չեն իրենց ձեռք բերած գործնական հմտություններից (**3,86**), այստեղ նույնպես խնդիր կա, և ամբիոններում հավանաբար պետք է վերանայվեն գործնական դասընթացներին տրվող ժամաքանակները, ծրագրերը և այլն:

Նախորդ 4 տարիների արդյունքների հետ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնաճյուղում **տեսական գիտելիքների մատուցումը մշտապես բարձր մակարդակի վրա է**, և այն մշտապես բարելավվում է: Ուսանողներն ընդհանուր առմամբ **բավարարված են նաև ձեռք բերած մասնագիտական կարողություններից**.





Մասնաճյուղը ***խնդիր ունի ուսանողների գործնական հմտությունների ձևավորման մակարդակի հետ***, շրջանավարտները գտնում են, որ իրենց ձեռք բերած գործնական հմտությունները չունեն այն բավարար մակարդակը, որն իրենց թույլ կտա անմիջապես աշխատել մասնագիտությամբ.



բ) Շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են մասնաճյուղում **մատուցվող դասընթացների օգտակարությունից**, սակայն գտնում են, որ անցկացվող **պրակտիկաներից** չեն ստացել ցանկալի վերջնարդյունքները:

Ըստ ֆակուլտետների և ուսուցման ձևերի դրանք հետևյալն են.





Նախորդ տարիների հետ համեմատությունը հաստատում է նույն գնահատականը, թեպետ պետք է արձանագրել, որ պրակտիկաների օգտակարության հարցում նկատվում է բավարարվածության աճ, որը մասնաճյուղում վերջին 2 տարիների ընթացքում պրակտիկաների ծրագրերի, անցկացման վայրի հետ կապված նորովի լուծումների և վերանայումների (վերանայվել են պրակտիկաների կազմակերպման մեթոդաբանությունը և թեմատիկան) արդյունք է.





գ) Դիտարկելով 2017-18 ուստարվա հարցման արդյունքներն այն տեսանկյունից, թե ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում որքանո՞վ է նպաստել **օտար լեզուների իմացությանը**, տեսնում ենք, որ ԵՊՀ ԻՄ-ում ուսումնառության ընթացքում օտար լեզուների իմացությունից բավարարվածությունը

բարձր է, սակայն՝ ոչ շատ բարձր (մասնաճյուղի միջինը առկա ուսուցման համակարգում՝ **4,24**, հեռակա ուսուցման համակարգում՝ **4.31**).



Բնական գիտությունների ֆակուլտետի առկա ուսուցման երկու կրթական ծրագրերի (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Քարտեզագրություն և կադաստրային գործ) շրջանավարտները օտար լեզվի անհրաժեշտ իմացության ապահովման մասնաճյուղի ջանքերը գնահատել են **3.67** միջին գնահատականով, Տնտեսագիտության ֆակուլտետի երկու կրթական ծրագրերի (Տնտեսագիտության տեսություն, Սերվիս) շրջանավարտները՝ **4.08**, Կիրառական արվեստի ֆակուլտետի երկու կրթական ծրագրերի (Կիրառական արվեստ, Դիզայն) շրջանավարտները՝ **4.18**: Բարձր է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում օտար լեզվի մատուցման մակարդակից՝ **4.48**, չնայած արդարության համար պետք է փաստել, որ համեմատար բարձր գնահատականը պայմանավորված է ֆակուլտետի երկու օտարալեզու կրթական ծրագրերի (Անգլերեն լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն) առկայությամբ:

Համեմատությունը նախորդ ուսատրիների բավարարվածության գնահատականի հետ ցույց է տալիս, որ **<u>ուսանողների մոտ նկատելի է օտար լեզվի իմացության փոքր առաջընթաց</u>**, ինչը ուրախացնող է, սակայն նորից մտահոգիչ.



Ըստ ուսումնասիրողների և վերլուծողների, օտար լեզվի իմացության խնդիրը այժմ, ժամանակակից մեծածավալ տեղեկատվության և հզոր տեղեկտվական տեխնոլոգիաների դարում ուսանողին ակնհայտորեն կանգնեցնում է դժվարության առաջ, մասնավորապես, շրջապատում հաղորդակցվելիս, գրականությունից օգտվելիս և այլն: Արդյունքում նրանք դառնում են պահանջատեր, ակնկալելով մասնաճյուղում ուսումնառության ընթացքում օտար լեզվի իմացության աճ: Սակայն այդ խնդրի լուծումը միակողմանի չէ: ***Այստեղ խնդիր կա, և օտար լեզուների ամբիոնները պետք է ուշադրություն դարձնեն լեզվի ուսուցման իրենց մեթոդաբանությանը, դարձնեն ավելի պրակտիկ, արդյունավետ և մատչելի:***

դ) Բարոյահոգեբանական տեսանկյունից էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ուսանողները որքանով են արդարացի ընկալում իրենց **<u>ձեռքբերումների գնահատումը</u>** դասախոսների և կրթության կազմակերպիչների կողմից: Այստեղ ևս մասնաճյուղում, ըստ շրջանավարտների գնահատականի, «իշխում» է օբյեկտիվությունը (առկա ուսուցման համակարգում՝ **4.30** և **4.49**).



Ներկայացված արդյունքները վկայում են, որ առկա ուսուցման համակարգի **<u>շրջանավարտները բավարարված են ամփոփիչ ատեստավորման քննության օբյեկտիվությունից</u>**, իսկ 4 տարիների ուսումնառության ընթացքում իրենց ձեռքբերումների գնահատումը համարում են օբյեկտիվ:

Նկատելի է կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտների ընդգծված անբավարարվածությունը իրենց գիտելիքների գնահատումից՝ **3.94:** Թեպետ, ֆակուլտետի 2 ամբիոններում, հաշվի առնելով մասնագիտությունների յուրահատկությունները, մշակել են տարբեր դասընթացների համար ուսանողների գնահատաման չափանիշներ, սակայն հարցման արդյունքները վկայում են, որ դրանք լիարժեք չեն, և ճիշտ չեն արտացոլում ուսանողի ձեռքբերումները: Այստեղ ֆակուլտետը դեռևս բավականին անելիքներ ունի: Առանձնապես բավարարված չեն նաև բնական գիտությունների և հումանիտար գիտությունների ֆակուլտետների շրջանավարտները՝ **4.27** և **4.24**:

Ըստ ուսուցման ձևերի գնահատումից բավարարվածությունն ունի հետևյալ պատկերը.



Սակայն ուշադրության է արժանի այն փաստը, որ առկա ուսուցման համակարգի 138 շրջանավարտներից 113-ը (**81.9%),** իսկ հեռակա ուսուցման համակարգի 132 շրջանավարտներից 122-ը (**92.4%)** 4 և 5 են գնահատել իրենց գիտելիքների օբյեկտիվ գնահատումը: Իսկ առկա ուսուցման համակարգի 127 (**92%),** իսկ հեռակա ուսուցման համակարգի 111 (**84.1%)** շրջանավարտներ 4 և 5 են գնահատել իրենց ավարտական աշխատանքների օբյեկտիվ գնահատումը:

Պետք է նշել, որ 2014 թվականից ներդրված «Դասընթացների փաթեթները» որոշակի փոփոխություններ են գրանցել ուսանողների ձեռքբերումների գնահատման համակարգում, մասնավորապես դասախոսների կողմից յուրաքանչյուր դասընթացի համար սահմանվել են գնահատման չափանիշներ, մեծ տեղ է հատկացվել ինքնուրույն աշխատանքների գնահատմանը, ուսանողները տեղեկացված են և գիտեն, թե ինչպես է գնահատվում նրանց յուրաքանչյուր ձեռքբերում, և ինչպես է ձևավորվում վերջնական գնահատականը: Եվ դա իր արտահայտումն է գտել շրջանավարտների հարցման արդյունքներում, որը վերջին ուստարվա համար նախորդներից բարձր է և հուսադրող: Այն, ինչը խթանում է նոր որոնումները տվյալ ոլորտում.





2018թ.-ի հարցման մեջ առաջին անգամ ներառվել է նաև ուսանողների հետ ավարտական աշխատանքների գիտական ղեկավարների աշխատելու որակները, որը նպատակ ունի բացահայտելու, թե որքանով են ղեկավարները աջակցում, աշխատում, ուղղորդում ուսանողին ավարտական աշխատանքը պահանջներին համապատասխան, տրամաբանված, հետազոտական տարրերով ներառված գրելու և ներկայացնելու համար: Շրջանավարտների տված գնահատականներն ըստ ֆակուլտետների հետևյալն են.

	ԵՊՀ ԻՄ	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտԳՖ
Որքանո՞վ եք բավարարված ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աշխատանքից	**4.77**	4.78	4.69	4.72	**4.87**

Այս արդյունքները վկայում են, որ մեր <u>շրջանավարտները բավարարված են իրենց գիտական ղեկավարների աշխատանքից</u>:

2. *<u>Բավարարվածությունը մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից</u>*

ա) Ժամանակակից բարձրագույն կրթության բաղադրիչ է <u>համակարգչային սրահների և համացանցի</u> մատչելիությունն ու կահավորանքը, ժամանակակից սարքավորումներով <u>ուսումնական լաբորատորիաների</u> հագեցվածությունն ու կահավորանքը.

Որքանո՞վ եք բավարարված.	ԵՊՀ ԻՄ	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտԳՖ
Լսարանների վիճակից և կահավորանքից	**4.33**	3.78	3.56	4.55	4.53
Ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեց-	4.26	4.27	3.40	4.50	4.36

վածության աստիճանից և կահավորանքից					
Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	4.64	4.72	4.63	4.65	4.61
Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից	4.46	4.33	4.27	4.51	4.50

Ինչպես տեսնում ենք, այս գնահատականներում ևս մասնաճյուղը «գոհունակությունների» հարթությունում է /**4.26-4.64**/: Այսինքն դրանք բարձր են, և՝ շատ բարձր: Նման բարձր գնահատականները 5-բալանի սանդղակում հիմնված են մասնաճյուղի համակարգչային ռեսուրսների, լաբորատոր ժամանակակից սարքավորումների, դրանց մատչելության և անխափան գործունեության փաստի վրա: Այն միաժամանակ սպասարկող անձնակազմի նվիրյալ և որակյալ աշխատանքի արդյունքն է:

Մյուս կողմից, ստացված տվյալների դիտարկումը որոշակի մասնագիտությունների կտրվածքով վկայում է, որ, շրջանավարտները միանման չեն ընկալում այն միջոցները, որոնք ընդհանուր օգտագործման են: Չեն բացառվում նաև գնահատականներում սուբյեկտիվիզմի տարրերը: Անաչառ վերլուծության համար ներկայացնենք հարցին պատասխանած և 4 ու 5 գնահատած առկա ուսուցման շրջանավարտների քանակն ըստ ֆակուլտետների.

Որքանո՞վ եք բավարարված.	ԵՊՀ ԻՄ		ԿԱՖ/18		ԲԳՖ/16		ՀԳՖ/66		ՏԱՏԳՖ/38	
	Քան.	%	Քան.	%	Քան.	%	Քան.	%	Քան.	%
Լսարանների վիճակից և կահավորանքից	125	91.2	14	77.8	10	62.5	64	97.4	37	97.4
Ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորում-ներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից	77	80.2	12	80	6	40	41	93.2	18	81.8
Համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	131	95.6	18	100	16	100	63	96.9	34	89.5
Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից	122	89.7	15	83.3	12	80	60	92.3	34	89.5

Այս տվյալների համաձայն շրջանավարտները բավարարված չեն մնացել ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից, ընդ որում ընդհանուր արդյունքի վրա իր ազդեցությունն են ունեցել Բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտների տված ցածր գնահատականները: Ըստ էության նրանք դժգոհ են լաբորատորիաների հագեցվածությունից, որը մենք ինքներս էլ հասկանում ենք, որովհետև «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրերի իրականացման համար այնքան էլ բավարար չէ նյութատեխնիկական բազան, լաբորատորիաներում անհրաժեշտ ժամանակակից սարքավորումները քիչ են, այն դեպքում, երբ ԵՊՀ-ից մասնաճյուղը նվեր է ստացել թանկարժեք տախիոմետր: Ակնհայտ է այս կրթական ծրագրերի իրականացման բարելավման նպատակով պետք է վերանայվեն ղեկավարության մոտեցումները մասնաճյուղի լաբորատորիաների հագեցվածության հետագա բարելավման համար, գտնվեն հովանավորներ, կամ ուղղակի միջոցներ նոր սարքավորումներ ձեռք բերելու համար:

<u>Համակարգչային սրահների մատչելիության և կահավորանքի, համացանցի մատչելիության առումով գնահատականներն ամենաբարձրերից են</u> (միջինը՝ **4.64, 4.46**): Այն, ինչ օբյեկտիվորեն ավելի է համապատասխանում իրականությանը, քանզի մասնաճյուղն ունի 4 համակարգչային սրահ և ընթերցասրահ՝ անվճար ինտերնետ կապով, WiFi կապով անկյուններ, աշխատանքային

հարմար ժամեր, նաև պետք է փաստել, որ հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտներն ավելի են բավարարված ռեսուրսներից.



Ասենք ավելին, տվյալները վկայում են, որ վերջին տարիների հարցումներում ռեսուրսներից բավարարվածությունը հիմնականում ամրագրել է առաջընթացի միտում.









բ) Ներկայացնենք մասնաճյուղի <u>գրադարանից և ընթերցասրահներից</u> շրջանավարտների բավարարվածության գնահատականները: Ընդհանուր առմամբ բավարար բարձր գնահատականների համապատկերում, որը պարբերաբար արձանագրում են մեր հարցումները, ուշադրության են արժանի Բնական գիտությունների և Տնտեսագիտության ֆակուլտետի շրջանավարտների՝ 4.0-ից ցածր կամ 4.0-ին մոտ գնահատականները՝ գրադարանում և ընթերցասրահներում տրամադրվող ժամանակակից մասնագիտական գրականությունից (համապատասխանաբար **3.71** և **4.14**): Իսկ Բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտները բավարարված չեն նաև գրադարանի և ընթերցասրահների վիճակից և

կահավորանքից, աշխատաժամերից և սպասարկումից (**4.19, 4.13**), ինչն իհարկե զարմանալի է, եթե հաշվի առնենք, որ ֆակուլտետն ունի կահավորված առանձին իր ընթեցասրահը.

Որքանո՞վ եք բավարարված. /առկա, 2017-18 ուստարի/	ԵՊՀ ԻՄ	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտԳՖ
Գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից	**4.20**	4.33	3.71	4.30	4.14
Գրադարանի և ընթերցասրահների վիճակից և կահավորանքից	**4.46**	4.56	4.19	4.58	4.30
Գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերից և սպասարկումից	**4.53**	4.50	4.13	4.65	4.51

Հետևաբար, սա առանձին ուսումնասիրության խնդիր է դառնում ֆակուլտետների ղեկավարների համար. և կարծում ենք, որ դա լուծելի խնդիր է, ու թերևս կապված է խիստ որոշակի պահանջների կամ ցանկությունների հետ:

Նույն հարցերի շրջանակներում հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների կարծիքներն ավելի բարձր են.



Այս ուղղությամբ մասնաճյուղի արդյունավետ գործունեությունը կբացահայտվի նախորդ ուստարիների շրջանավարտների գնահատականների հետ համեմատական վերլուծության արդյունքում.



ինչը ցույց է տալիս, որ առանձնացված 3 առումներով ըստ էության կարծիքների փոփոխություն առանձնապես չկա. ***մասնաճյուղը խնդիր ունի ժամանակակից գրականությամբ գրադարանը հարստացնելու և գրադարանի և ընթերցասրահների կահավորման ու աշխատաժամերի վերանայման հետ կապված***:

3. Բավարարվածությունը համալսարանական միջավայրից

Մասնաճյուղային միջավայրից բավարարվածության վերաբերյալ ներկայացնենք **մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի** հանդեպ շրջանավարտների վերաբերմունքը, նրանց գործունեությունից բավարարվածության տվյալները.



Իր գոյության երկուսուկես տասնամյակի ընթացքում կրթօջախը լիարժեքորեն կայացել ու հանրապետության բարձրագույն կրթական համակարգում իր կայուն տեղն է գրավել նախ և առաջ նվիրյալ ղեկավարների ու արհեստավարժ-հայրենասեր պրոֆեսորադասախոսական կազմի շնորհիվ: Ուրախությամբ կարելի է նշել, որ պատերազմական վիճակում գտնվող երկրի սահմանային մարզում գործում է միջազգային չափանիշներին բավարարող բարձրագույն կրթօջախ: Իրենք շրջանավարտները, հրաշալի պատկերացնում են հանրապետության բարձրագույն կրթօջախների վիճակը, հնարավորություններն ու խնդիրները և միաժամանակ գիտեն, որ մասնաճյուղն իր բոլոր անհրաժեշտ որակներով չի զիջում որևէ բուհի, եթե ոչ՝ ավելին:

5-միավորանոց սանդղակով **4.63-4.72** գնահատականները դրա խոսուն վկան են.



Այս գնահատականներից երևում է մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետների ղեկավարության կոմպետենտությունը, ուսանողների հետ աշխատելու նրանց բարձր որակները և այլն: Մասնաճյուղի ղեկավարությանը տրված համեմատաբար ցածր գնահատականները, ենթադրում ենք, որ պայմանավորված է 2018թ.-ի հայտնի իրադարձություններով:

Իսկ նախորդ տարիների հետ համեմատական արդյունքները հետևյալն են.







բ) Ժամանակակից հայաստանյան բարձրագույն կրթության գլխավոր մտահոգություններից մեկը բուհ-աշխատաշուկա բարդ ու հակասական հարաբերություններն են, ապագա մասնագետներին աշխատանքի տեղավորելու խնդիրը, ուսանողների ինքնուրույնության, ինքնակառավարման և ուսանողական միջավայրի ապահովումը: Կրթական համակարգի օբյեկտիվ զարգացումների համապատկերում հանրապետության բոլոր բարձրագույն կրթօջախներում, այդ թվում՝ ԵՊՀ ԻՄ-ում, ձևավորվել են շրջանավարտների և կարիերայի կենտրոններ, որոնց գործունեությունը կոչված է համակարգելու և լուծելու ապագա մասնագետներին աշխատանքի տեղավորելու խնդիրները, գործում են ուսանողական կառույցներ՝ ՈՒԽ և ՈՒԳԸ: Սույն համատեքստում շրջանավարտները գնահատել են մասնաճյուղի **շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ու ուսանողական կառույցների** գործունեության արդյունավետությունը, նրանցից բավարարվածությունը: Ներկայացնենք **առկա** ուսուցման համակարգի շրջանավարտների կարծիքները.



Ընդհանուր գնահատականների համապատկերում, ինչպես տեսնում ենք, մասնավորապես ուսանողական կառույցներին շրջանավարտների տված գնահատականները համեմատաբար ավելի

ցածր են, ինչը առավել ընդգծված է Բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտների մոտ՝ **3.79**: Համեմատաբար ավելի բարձր են կարիերայի կենտրոնին տրված գնահատականները: Ընդ որում առկա կարիերայի կենտրոնին վերաբերող հարցին պատասխանած 126 շրջանավարտներից (10 շրջանավարտ դժվարացել են պատասխանել) **107**-ը իրենց բավարարվածությունը գնահատել են 4 և 5 գնահատականներով: Թերևս կենտրոնի գործունեության արդյունավետության մասին ստացված տվյալներից միանշանակ հետևություն անել հնարավոր չէ: Այն բուհական կրթության մեջ համեմատաբար նոր կառույց է, իրենք՝ ուսանողները, ազատ են իրենց աշխատանքային հետագա ճակատագիրը տնօրինելու հարցում: Ընդհանուր ճշմարտությունն ու փաստն այն է, որ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը չունի ֆակուլտետային ստորաբաժանումներ, և շրջանավարտները կարծում են, որ տվյալ կառույցները կարող էին ավելի արդյունավետ քայլեր կատարել իրենց աշխատանքի տեղավորման հարցում: Կարծում ենք, այս խնդիրը պետք է դառնա ուշադրության առարկա, պարզաբանվեն պատճառ հանդիսացող խնդիրները, նշվեն այն գործոնները (օրինակ, կենտրոնի մասին ուսանողների իրազեկվածության ապահովում, գործընթացների հրապարակայնության ապահովում, գործընթացներում ուսանողների և շրջանավարտների ներգրավում և այլն), որոնք կօգնեն ավելի արդյունավետ դարձնել կենտրոնի գործունեությունը: Հանուն արդարության նշենք, որ ուսանողների իրազեկվածությունը երկրորդական դեր չունի սույն հարցում: Ուսանողը չի հետաքրքրվում աշխատանքի տեղավորվելու իր խնդիրներով, և ակամա տվյալ հարցում «մեղավոր» է դառնում կառույցը: Բացառված չէ նաև այն հանգամանքը, թե կառույցը ինքը, այդքան էլ վատ չի աշխատել, սակայն այդ մասին ուսանողներին լիարժեքորեն իրազեկելու բավարար քայլեր չի կատարել: Ասվածը վերաբերում է նաև մյուս գործոններին:



Ուղղակի կնշենք, որ այնուամենայնիվ, **<u>նկատվում է կարիերայի կենտրոնի գործունեության ակտիվություն վերջին տարիների ընթացքում,</u>** որը չի վրիպել շրջանավարտների ուշադրությունից.

Թեպետ մասնաճյուղի Ուսանողական խորհուրդը Հայկյան-2018 մրցանակաբաշխությունում ճանաչվել է մարզային լավագույն ուսանողական կառույց, թեպետ մասնաճյուղի ուսանողները մասնակցում են տարբեր հանրապետական, նաև մասնաճյուղային գիտաժողովների, այնուամենայնիվ ***շրջանավարտները բավարարված չեն ուսանողական կառույցների աշխատանքից և այդ գնահատականը վերջին ուստարիների կտրվածքով այդպես էլ չի բարելավվել***:



Ուսանողական կառույցները սովորողների համար ամենասիրելի հաղորդակցման, սոցիալական ակտիվության դրսևորման միաջավայրն են: Եվ եթե նրանց գործունեությունը շրջանավարտների վիճակագրորեն նշանակալից քանակին ոչ միշտ և ոչ բոլոր հարցերում են բավարարում, խոսում է այն մասին, որ մեր կրթօջախի գործունեության սույն ոլորտը կատարելագործվելու կարիք ունի:

գ) Քննարկումները, հետագա ուսումնասիրություններն ու տվյալների վերլուծությունը պետք է հուշեն օբյեկտիվ և սուբյեկտիվ այն գործոնների դաշտը, որը բարեփոխելով՝ հնարավոր է ավելի շատ բավարարել ուսանողների պահանջները: Թերևս նույն կամ հարակից ոլորտին է վերաբերում ուսանողների դիմումներին ու բողոքներին արձագանքելու ընթացակարգերին ու մեխանիզմներին տված գնահատականները.



Այստեղ ևս տեսնում ենք, որ ուսանողների ճնշող մեծամասնությունը ուսանողների դիմումներին ու բողոքներին արձագանքելու ընթացակարգերին ու մեխանիզմներին տվել է բարձր գնահատական (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ **4.46**, Տնտեսագիտության ֆակուլտետ՝ **4.31**): Երկու ֆակուլտետների (Բնական գիտությունների՝ **3.92** և Կիրառական արվեստի՝ **4.06**) գնահատականները պահանջում են բացահայտում, թե դրանք արձագանքման որ մակարդակի պատճառով են: Իսկ ընդհանուր առմամբ հարցումը ամրագրում է վիճակագրական այն փաստը, թե **մասնաճյուղում ուսանողների խնդիրներին արձագանքում են օբյեկտիվորեն և արդարացիորեն**:



4. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը

Ներկայացնենք 2017-18 ուստարվա հարցման արդյունքները՝ մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ.

Հարց /առկա, 2017-18 ուստարի/	ԵՊՀ ԻՄ	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտԳՖ
Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը	**4.36**	4.11	4.19	4.51	4.29

Ինչպես տեսնում ենք, բոլոր ֆակուլտետների համար առկա ուսուցման շրջանավարտները **մասնաճյուղում ստացած կրթությունը գնահատել են 4-ից բարձր**, իսկ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի համար՝ շատ բարձր (**4.51**): Այդ հարցում հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտներն իրենց ավելի բավարարված են զգում՝ միջին գնահատականը **4.40**, ընդ որում առկա ուսուցման 138 շրջանավարտներից 127-ը (**92%**) մասնաճյուղում ստացած իրենց կրթությունը գնահատել են 4 և 5 գնահատականներով, իսկ հեռակա ուսուցման համակարգի 132-ից 112-ը (**84.8%**).



Տարբեր տարիների հարցումների ընդհանուր գնահատականների համադրումը վկայում է, որ **մեր շրջանավարտների կարծիքն իրենց ստացած կրթության վերաբերյալ բարձր է** և առկա է առաջընթացի միտում, ինչը վկայում է մասնաճյուղում պարբերաբար իրականացվող բարելավման գործընթացների մասին: Ըստ ֆակուլտետների այն ունի հետևյալ պատմությունը.

Թիվ	ուս.տարի	Միջ.գն.	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտՖ
1	2011-12	**4.30**		4.42	4.22	4.10
2	2013-14	**4.37**	4.35	4.17	4.51	4.13
3	2015-16	**4.39**	4.78	4.33	4.29	4.41
4	2016-17	**4.42**	4.43	3.70	4.60	4.48
5	2017-18	**4.36**	**4.11**	**4.19**	4.51	**4.29**

Հետագա առաջընթացի ապահովման տեսանկյունից կարծում ենք, որ այստեղ կարևոր է կադրային ներուժի հզորացումը՝ հատկապես տեղացի կադրերի ներգրավման միջոցով: Սույն առումով հատկանշական է, որ շրջանավարտների 3-ից մեկը պատրաստակամ է շարունակելու ուսումը, ինչը լուրջ մարդկային ռեսուրս է (հարցմանը մասնակցած 270 շրջանավարտներից 100-ը (**37%**) պատրաստվում են շարունակել իրենց ուսումը) և ողջունելի փաստ.

Ուսուցման ձևը	ԵՊՀ ԻՄ	ԿԱՖ	ԲԳՖ	ՀԳՖ	ՏնտԳՖ
առկա	138/64 (46,4%)	18/1	16/6 (37,5%)	66/40 (60,6%)	38/17(44,7%)
հեռակա	132/36 (27,3%)		24/10 (41,7%)	60/19 (31,7%)	48/7 (14,6%)
Ընդամենը	**270/100 (37%)**	**18/1**	**40/16 (40%)**	**126/59 (46,8%)**	**86/24 (27,9%)**

ընդ որում հարկ է նշել, որ անցած ուսումնական տարվա առկա ուսուցման 160 շրջանավարտներից 68 (**42,5%**) շրջանավարտ է ցանկացել շարունակել ուսումը, իսկ 2017-18 ուստարվա առկա ուսուցման 138 շրջանավարտներից 64-ը (**46.4%**): Այդ առումով այս տարի ավելի շատ շրջանավարտներ են ցանկացել շարունակել իրենց ուսումը, ինչը վկայում է իրենց ստացած

գիտելիքների, ձեռք բերած կարողությունների նկատմամբ նրանց ինքնավստահության, ինչու չէ նաև ուղղակի ավելիին հասնելու ձգտումի մասին:

Ուրախալի է և նոր դիմորդների առկայության հնարավորությունը (2017-18 ուստարվա հարցմանը մասնակցած 270 շրջանավարտներից 244-ը, այսինքն՝ **90,4%-**ը, իրենց մերձավորներին և ընկերներին պատրաստակամ են խորհուրդ տալու ուսանելու մասնաճյուղում): Ըստ ֆակուլտետների 2018թ.-ի համար այն ունի հետևյալ պատկերը.

Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ	ԵՊՀ ԻՄ	ԲՆ	Տնտ	Հում	ԿԱ
առկա	**85.5%**	87.5%	92.1%	81.8%	83.3%
հեռակա	**95.5%**	95.8%	100.0%	91.7%	
Ընդամենը՝	**90.4%**	**92.5%**	**96.5%**	**86.5%**	**83.3%**

Այս գնահատականները բնութագրում են մասնաճյուղի պահանջվածությունը համենայն դեպս տարածաշրջանում, նրա բարձր վարկանիշը, և այն, որ մասնաճյուղում սովորելուց հետո շրջանավարտները վստահաբար խորհուրդ կտան իրենց հարազատներին ընդունվել մասնաճյուղ: Նախորդ տարիների հետ համեմատական վերլուծությունը ևս մեկ անգամ հիմնավորում է այդ կարծիքը, այն մշտապես բարձր է: Իսկ ընթացիկ տարվա համեմատական 3-5% նվազումը ամենայն հավանականությամբ պայմանավորված է 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսների հանրապետությունում տեղի ունեցած դեպքերով (սա մեր սուբյեկտիվ կարծիքն է): Չմոռանանք, որ հարցումն անց է կացվել առցանց, որտեղ շրջանավարտները հնարավորություն են ունեցել ազատ արտահայտել իրենց կարծիքը, որը տվյալ հարցի համար այնուամենայնիվ եղել է բավականին բարձր: Ստորև ներկայացված է միայն առկա ուսուցման համակարգի շրջանավարտների գնահատականները.



Հարցաթերթը պարունակել է նաև բաց հարց, որոնց արդյունքները խմբագրվել են և հարկ է նշել, որ ըստ պատասխանների շրջանավարտներին դուր է եկել դասախոսական կազմը և նրանց կողմից տրվող գիտելիքները, նրանց բարձր մակարդակը, վերաբերմունքը և տրամադրվածությունը, անաչառությունը, նվիրվածությունը, կիրառվող ուսուցման մեթոդները և ներկայացնելու ձևը, մասնաճյուղի աշխատակիցները և նրանց համախմբվածությունը, մատչելի ուսուցումը և բնակավայրին մոտ լինելը: Նշենք մի քանի կարծիքներ.

- Հմուտ դասախոսների առկայությունը, ուսանողին օգնելու նրանց պատրաստակամությունը և ըմբռնողականությունը (**Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա),**
- Մասնագետների բարձր մասնագիտական որակները, արդարացի գնահատումը, շատ պրակտիկ աշխատանքների իրականացումը (***Քարտեզագրություն և կադաստրային գործ),***

- Գերազանց դասախոսական անձնակազմը, լավ վերաբերմունքը, հարգանքը ուսանողության նկատմամբ (***Անգլերեն լեզու և գրականություն),***

- Խստապահանջությունը, աշխատասիրությունը, կարգապահությունը, դասախոսների ուսանողակենտրոն ուսուցման ձևը և ուսանողին ինքնուրույն աշխատանքներ կատարելուն մղելը (***Հայոց լեզու և գրականություն),***

- Դասախոսների կոմպետենտությունը, ուսանողակենտրոն ուսուցումը, օբյեկտիվությունը, անկողմնակալությունը (***Մանկավարժություն և հոգեբանություն),***

- Դասախոսների աջակցությունը ուսանողներին, բանավեճերի առկայությունը, լավ գնահատումը, հարմար վարձաչափերը (***Պատմություն):***

Իսկ թե ինչ թերություններ են տեսել և ինչ առաջարկներ ունեն բարելավելու համար, հարցման մասնակիցները նշել են.

- Ավելացնել պրակտիկայի ժամաքանակը, արդիականացնել տրվող նյութերը, ավելացնել մասնագիտական գրականության քանակը և ցանկը (**Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա),**

- Ավելացնել մասնագիտական գրքերի քանակը, բարելավել լաբարատորիաների պայմանները (***Քարտեզագրություն և կադաստրային գործ),***

- Վերացնել խտրականությունը ուսանողների միջև, կողմնապահությունը, կաղապարվածությունը (***Անգլերեն լեզու և գրականություն),***

- Ներդնել նորարարական լուծումներ, պայքարել սուբյեկտիվության դեմ, ավելացնել մասնագիտական գրականությունը (***Մանկավարժություն և հոգեբանություն),***

- Ավելացնել գործնական պարապմունքների ժամաքանակը, մասնագիտական գրականության քանակը վիճակագրությունից, արտադրական պրակտիկայի տևողությունը (***Տնտեսագիտության տեսություն)***

- Ավելացնել օտար լեզվի ժամաքանակը, ապահովել պրակտիկաների մասնագիտական ուղղվածությունը (***Սերվիս):***

Ամփոփելով հարցման արդյունքները նշենք, որ դրանք օգնելու են համապատասխան կառույցներին իրենց հետագա աշխատանքներում: Վերանայվելու են որոշ գործընթացներ, ծրագրեր, մեթոդներ, որպեսզի շրջանավարտները ստանան բարձր ուսումնառություն և բավարաված լինեն թե մասնաճյուղում ստացած կրթությունից, թե ուսումնական միջավայրից, և թե բոլոր ծառայությունների աշխատանքից ու ղեկավարումից:

Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել որոշակի առաջարկություններ: Մասնավորապես կարծում ենք, որ հարկավոր է.

-այն ֆակուլտետներում, որտեղ ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների գծով եղել է պակաս բավարարվածություն, դարձնել առանձին քննարկման ու վերլուծության առարկա, ինչը թույլ կտա հայտնաբերել վարչական ու բարոյահոգեբանական ռեսուրսներ՝ դրանց վերացման համար,

-ուսանող-շրջանավարտների կարծիքը հաշվի առնելու ցանկացած փաստ դարձնել մասնաճյուղում ընդհանուր իրազեկման նյութ. հանգամանք, որը դրական կանդրադառնա մասնաճյուղի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, ինչպես նաև կմեծացնի նման հարցումների՝ որպես բուհի կառավարման գործոնի արդյունավետությունը,

-հարցման արդյունքները տեղադրել մասնաճյուղի կայքում և քննարկել յուրաքանչյուր ֆակուլտետում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին